Խրիմանֆին Երևանում ցոյց տուին սիրալիր ընդունելութիւն, և մի շարք խորհրդակցութիւններից յետոյ երկուստեք ընդունեցին հետևեալ պայմանները. 1) Պոնտոսը, վերոյիշեալ սահմաններում, մտնելու է Հայաստանի մէջ, իբրև նրա դաշնակցային (ֆեդերատիւ) մէկ մասը. իր ներքին գործերում Պոնտոսը կառավարելու էր սեփական Սէյմի միջոցով. 2) Հայկական և Պոնտոսեան պատւիրակութիւնները Փարիզում գործելու էին համերաշխ. 3) Ի հարկին, եթէ Հայաստանի ու Պոնտոսի անկախութիւնը մերժուի, հայերն ու յոյները միասին քայլեր էին առնելու, մինչև ապստամբութիւն՝ հարկադրելու համար, որ ճանաչուի ընդհանուր անկախութիւնը. 4) Սոյն պայմանագրութիւնը պէտք է համաձայնեցուէր յոյն և հայկական պատւիրակութիւնների գործունէութեան Փարիզում, ինչպէս և Վեհաժողովի որոշելիք սահմաններին:

Սակայն, մենք չեղեցինք պատմութեան ընթացքից:

Յունս. 31-ին, Ալեքսանդրապոլում՝ «Հայաստանի երկրորդ մայրաքաղաքում» տեղի ունեցաւ Հայաստանի Համալսարանի հանդիսաւոր բացումը: Երևանից ու Թիֆլիսից, յատուկ գնացքներով, եկել էին բազմաթիւ հիւրեր՝ Խորհրդարանի նախագահ Ա. Սահակեանը, վարչապետ Ա. Խատիսեանը, բրիտանական ներկայացուցիչ Օ. Ուօրդրոպը, Հայաստանի դերագոյն կոմիսար գնդ. Հասկելը իր կնոջ ու շքախմբի հետ, ֆրանսական ներկայացուցիչ կապ. Պուագերարը, Կամաւորական Բանակի ներկայացուցիչ գնդ. Զենկևիչը, պարսից ընդհանուր-հիւպատոս Ասադուլլա խանը, Ադրբէջանի դիւ. ներկ. Հախվերդովը, հանր. կրթութեան և արուեստի նախարար Ն. Ադալեանը, արդար. նախ. Ա. Չիլինգարեանը, եկեմտ. նախ. Մ. Արարատեանը, խնամ. նախ. օգն. բժ. Յ. Տէր-Միքայէլեանը, Խորհրդարանի անդամներ բժ. Յ. Տէր-Դաւթեանը, Մ. Յարութիւնեանը, Ռ. Տէր-Մինասեանը, Վ. Մինախորեանը, Ս. Վրացեանը, Ա. Խոնդկարեանը, Ա. Սաֆրաստեանը, Տ. Ծամհուրը, Ա. Ղազարեանը, զօր. Նազարբէգեանը, զօր. Հախվերդեանը, համալսարանի ուսուցչապետները՝ պրոֆ. Ղամբարեանի գլխաւորութեամբ, բանաստեղծ Յ. Յովհաննիսեանը, պրոֆ. Ա. Խաչատրեանը և շատ ուրիշ պետական ու հասարակական, գրական ու գիտական դէմքեր: Ալեքսանդրապոլի քաղաքային վարչութիւնը կազմակերպել էր փայլուն ընդունելութիւն: Կայարանում պատրաստուած էր թէյասեղան: Համալսարանի դահլիճը զարդարուած էր կանաչով ու դրօշակներով: Նստած էր զինուորական խումբը:

Հանդէսը բաց արաւ համալսարանի տեսուչ վաստակաւոր գիտնական պրոֆ. Ի. Ղամբարեանը, որից յետոյ նախարար Ն. Ադալեանը, մի ընդարձակ ու կուռ ճառով վեր հանեց համալսարանի դերը հայ պետականութեան և մշակոյթի զարգացման գործում: «Այն ջահը, ասաց նա, որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրաւանդակի վրա, չի հանգչի երբեք և կը լուսաւորէ Առաջաւոր Ասիան»: Եւ մաղթեց, որ Հայաստանի համալսարանը լինի մատչելի ամենքի համար, — մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժուար—որ ուսումը լինի ճրի, գիտութիւնը վարուի գործնական եղանակով, որ հիմք դրուի համայնական գիտական աշխատանքին Հայաստանում: